

ՆՈՐԱՅՐ ՂԱԶԱՐՅԱՆ

ՅԻՆ ԵԳԻՊՏԱԿԱՆ «ՄԵՌՅԱԼՆԵՐԻ ԳԻՐՔԸ» ԵՎ
Յ. ԷՂՈՅԱՆԻ «ԱՅԺՄ ԵՎ ՄԻՇՏ» ԺՈՂՈՎԱԾՈՒՆ

Յին եգիպտական «Մեռյալների գրքի» ավանդներին առնչությունը նկատելի է Յ. Էղոյանի դեռևս առաջին ժողովածուներում («Պատկեր և կեսօր», «Երկրային ժամանակ», «Այժմ և միշտ»): Յետագա ժողովածուներում աղերսները խորանում են և միաձուլվում քրիստոնեական բանաստեղծության Էղոյանական յուրացումներին: Բանաստեղծության համադրական կառուցվածքը նոր չէ: Նարեկացու ստեղծագործության մեջ նկատելի են նաև «Մեռյալների գրքի» հետ առնչությունները: 20-րդ դարասկզբի պոեզիան գեղարվեստական «ինֆորմացիայի» նոր տիրույթ մտավ հենց համադրականության հաշվին: Ա. Բելիի պոեզիայում իմաստային զարգացման կապով կապված են Ապոլոնն ու Քրիստոսը (ապոլոնյանը «Հավերժի» պատկերն է, Քրիստոսինը՝ սեփական «ես»-ի ոլորտը)¹: Կյաչեսլավ Իվանովը նույնացնում է Յերակլեսին և Քրիստոսին (հակոտնյա կառուցվածքներ): Ֆ. Յյոլդեռլինը, որը անտիկականության և քրիստոնեության համադրություն է անում, ըստ Յ. Մովսեսի, «վերահաստատում է մարդկային պատմության մի պատկեր, որում հունական աշխարհի կերպարները իրագործվում են իբրև Սիակի՝ ի սկզբանե խոստացվածության խորհրդանշաններ...»²: Իր հերթին, Յ. Էղոյանը գեղարվեստորեն համադրում է Յին եգիպտական, բուդդայական ու քրիստոնեական կրոնական և մշակութային շերտերը, միասնության մեջ տեսնելով կյանքի չափանիշների բացահայտման ամենալայն հնարավորությունները, գոյաբանության մասշտաբայնությունը: Բոլոր դեպքերում, ինչպես Յյոլդեռլինի պարագայում է, Յ. Էղոյանի պոեզիայում ամեն ինչ կանխորոշված է Քրիստոսով, քրիստոնեական ասացողությամբ նախանշակության ոլորտների՝ հենց իրենով բոլոր կանխորոշվածությունները:

Քրիստոսի կերպարում անցյալը զալիք է. և Յ. Էղոյանը, կիրառելով Յին եգիպտական «Մեռյալների գրքի» բանասերերը, դրանց բովանդակային ելքերը զուգորդում է Աստվածաշնչի մարգարեություններում կանխորոշված զալիքին՝ արդեն որպես գեղարվեստական ներկա: Ժամանակային երեք կտրվածքները հանդես են գալիս միասին: Կապող օղակը տեսիլքն է: Աստծո ներկայության և կորուստիության ողբերգական ոլորտում Ոգին և Խոսքը ստանձնում են

¹ Յ. Էղոյան «Չարենցի պոետիկան», Երևան, 1989թ., էջ 85:

² Ֆ. Յյոլդեռլին «Բանաստեղծություններ», «Նաիրի», Երևան, 2002թ., առաջաբան, էջ 15:

«Հինգ խոսք» բանաստեղծությունն ստեղծում է խոսք-անուն-ծայն-կերպար փակ օղակը՝ իմաստաին և էութենական կապով: «Քառեր, ավելի խորը թաքցրեք ինձ»։ Բանաստեղծը ցանկանում է հասնել անանունության, այսինքն՝ «ես»-ից ազատման և հավաքական հոգու մեջ, նրանով ներկայանալուն: Հ. Էդոյանի բանաստեղծական «ես»-ը միշտ ձգտում է ավետարանական «ես»-ին, որը Նրա՝ Տիրոջ ներկայության դեմքն է: Էդոյանը, մեր կարծիքով, «Մեռյալների գրքի» բանաձևային այն բառերին և կապակցություններին է դիմում, որոնք զուգահեռ են Նոր կտակարանին: Իհարկե, նշված օրինաչափություններից շեղումները չեն բացառվում: Օրինակ, Հին եգիպտական հավատալիքով պետք է պահպանել մեռյալի մարմնի ամբողջականությունը, որպեսզի հետագայում շնչառությունը վերադառնա և կյանք հաղորդի նրան: Եթե այս հավատալիքը մեզ ծանոթ չլինի, չենք ըմբռնի մարմնի մասերի ամբողջականությունն պահպանման Էդոյանական պատկերի իմաստը: Ասենք՝

-ես դռների միջև

հավաքում եմ մեկ-մեկ իմ մարմնի բեկորները...

որոնց միջև մի օր արծանը պիտի կերտեմ

իմ ամբողջություն...

(«Դռները», «Այժմ և միշտ»)

Տողերը կյանքը վերստանալու, վերհառնումի ձգտման արտահայտություն են՝ դիցա-կրոնական ողբերգական ընկալման հատկանիշներով, գաղտնիքի խորհրդով: Օրինակները կարելի է շարունակել՝

-որոնցով ես հիմա

պիտի կառուցեմ

իմ հուշարձանը:

(«Սովերներ ծառի վրա»)

Հուշարձանը, քանդակը մարմնի ամբողջականության այլասացական ձև են: «Մեռյալների գրքում» մարմնի ամբողջականության պահպանման վերաբերյալ ասույթները շատ են: «Ես հավաքել եմ մեկտեղ նրա ոսկորները, հավաքել եմ նրա մարմնի բոլոր մասերը» («Յոթ հանգրվաններ») (Արիթներ)), «Նութը միացրել է իրար իմ ոսկորները», «Ի մի ես բերում քո մարմնի մասերը» և այլն: Մարմնի մասերի ամբողջականությունը պահպանելուց հետո որոշ ժամանակ անց, ըստ եգիպտական հավատալիքի, շունչը վերադառնում է և մարմնին կենդանություն հաղորդում, այս անգամ եթերային մարմնով, այլագոյության մեջ: Այս հավատալիքի հետ է կապված Նարեկացու «Մատենան»-ի ԺԲ (գ) մասի՝ փակ շրթունքների վերստին շարժման ներգործման միջոցի ճիշտ մեկնությունը: Հին լուծմունքով՝ շուրթերի շարժման «միջնորդը» միտքն է, ըստ Գ. Ավետիքյանի՝ աղոթքը, այնինչ եգիպտական հավատալիքով եթերային շնչառությունն է Ղուսթուն: Ղուսն ու դարպասը բանաձևային կայուն միավորներ են «Մեռյալների գրքում»; Յոթ հանգրվանների դարպասներից ներս մտնողը «չի մերժվի Օսիրիսի առջև» («Յոթ հանգրվաններ»): «Մատենան»-ում երկիրը երկնքի հետ կապ ունի դռով: Չարենցը «ամբողջ» է անվանում Արարատյան դաշտը (իմա՝ անելանելի): «Ես անցնում եմ երկնքի դարպասներով»՝

«Մեռյալների գրքի» «Հերակլեոպոլում կոտորածից հրաժարվելու համար» մասից է: «Դուռը» կամ «դարպասն» անցնելու համար «Մեռյալների գրքում» հատուկ գիտելիքներ են պարտադիր:

Հ. Էդոյանը «դուռ», «դարպաս» անցնելու արքեստիպային իմաստները պահպանում է: «Խաղը» բանաստեղծության մեջ մարդիկ նետված են «տարբեր դռների մոտ»: «Արևածաղկի ցերեկն ու գիշերը» բանաստեղծությունը, ի տարբերություն վերը բերված տազնապալի պատկերի, «կիջնեն դռան առաջ սուրբ գիշերների» տողով արտահայտում է հոգևոր միասնության խորհուրդը:

-Ես դռների միջև

շոշափում եմ իմ ամբողջությունը...

Դռների ետևում աստվածներն են, որոնք ~~դռեր~~ են անում և «ես» որոնումի մեջ է՝ ինչպես վերստին ստանալ շունչը, կենդանությունը, ինչը «շոշափում եմ իմ ամբողջությունը» բանածնային կապակցության իմաստն է:

-Ես չունեմ ոչ մի դուռ,

և ոչ մի բռնակ ձեռքս չի պտտում...

Դժվար չէ կռահել անօգնականության և անկանխատեսելի վիճակի ծանր զգացումը: Աստվածների դատը, որով հանգուցյալին ընդունում են երկնային դաշտում, բաժին չի ընկնում:

- Գիշերը մեզ պահում է փակ դռան առաջ... («Դռները»)

Նույնն է, աստվածների գիշերային դատավճիռը սեփական անծի համար բացակայում է:

...Ամեն դուռ ես բացում եմ

Ինչպես ինքնուրույն թագավորություն... («Դռները»)

Նկատի ունի դատավոր-աստվածների տարբեր վճիռների գորությունը, «որի օրենքները պարտադիր են ինձ»:

«Փակ դռան» լուրջությունը «մեծամիտ» է. այնտեղ աստվածներ են: «Բաց դռան աղմկոտ գլխատումի մեջ» տողը ակնարկում է դատավճիռը:

Հոգին ծանր փակուղու առաջ է.

-բայց այն դուռը, այն.

որ դրված է այսպես

աշխարհի և իմ միջև,

ես չեմ գտնում, չեմ բացում -

ես նրան ձեռք չեմ տալիս: («Դռները»)

«Ես նրան ձեռք չեմ տալիս» տողն առանձնանում է իր ծիսական բնույթով. ի պելը, ձեռք տալը, որ անցել է քրիստոնեությանը, մոգության ծիսական գործողություն է, որը բացահայտում է գաղտնիքը և անմիջական գորություն հաղորդում: Ձեռք տալու դեպքում դուռը պետք է բացվեր:

«Դռների միջև» «շոշափում» է իր «ամբողջությունը». աստվածների աստյանում կրկին ստուգում է փրկության հնարավորությունը: Նույնանշանակ է հետևյալ տողը. «Ես դռների միջև // հավաքում եմ մեկ-մեկ իմ մարմնի

բեկորները...»: Հիշենք, որ Օսիրիսի հարության համար Իսիդան է հավաքում նրա մարմնի անջատված մասերը: «Դոմերը» բանաստեղծությունը ավարտվում է «որոնց միջև մի օր արծանը պիտի կերտեն // իմ ամբողջության // և ապրեն միաձուլված բոլոր դոմերին» տողերով, որը նշանակում է հարություն առնել և ընդունել դատավոր-աստվածների վճիռները: «Այժմ և միշտ» ժողովածուի համար բնութագրական ենք համարել հռետորական հարցը, որն, իր հերթին բնորոշ է. ինչպես ասել ենք, «Մեռյալների գրքին» և Նոր կտակարանին: «Նյու-Յորքի գիշերները» բանաստեղծության մեջ հռետորական հարցերը իմաստաբանական և պոետիկական հանգույց են ստեղծում:

-Ո՞րտեղ են ավարտվում այս փողոցները

և որտեղից են սկսվում երկինքները,

Ի՞նչպես տարբերել գիշերվա մեջ վառվող շենքերն ու աստղերը...

Գիշերը այս բանաստեղծության մեջ նկատի է առնվում միջակայ ժամանակ՝ օժտված դիվականությամբ («Կյանքը և մահը հավասարվում են սնդիկի սյան մեջ»): «Նյու-Յորքի գիշերները» բանաստեղծության ավարտական մասում միստիկական պատկերներն ուժգնանում են:

-Քսաներկումայա նկարիչ՝

գույգ ձեռքերից գրկված,

իր կյանքն էր նկարում այստեղ

գիշերը տասներկուսն անց:

Նկարիչը նկարում է՝ գրկված ձեռքերից, ժամանակի ճշգրիտ նշումը ավետարանական երանգ ունի: Բանաստեղծությունը հասնում է դրամատիզմի գագաթնակետին, որը հակադրություն էր ժամանակի բանաստեղծության ապատիկ կերպին: Բանաստեղծը, կրկին, «Մեռյալների գրքի» ավանդույթով, խոսքը բաղադրում է նշանների: «Ես դուռ եմ տեսնում իմ ամեն բայի առաջ՝ // առանց նշանների և կամ նշաններով»: Նշանները կապված են հոգևոր բնության ըմբռնումների հետ:

-Մեր դեմքն է կրկնվում – ողողված

սեփական անդրադարձումներով

և տարօրինակ գրություններով:

-Ես արթնանում եմ սարսուռների մեջ

և փորձում օրվա մեջ

վերծանել իմ գիշերվա ծածկագրերը: («Երկու կյանք»)

«Ծածկագրերը» խոսում են կյանքի փակ կողերի, գաղտնիքի մասին:

Գաղտնիքը Աստծո հետ հաղորդակցման պայման է նաև Նոր-ալլատոնականների համար: «Նյու-Յորքի գիշերները» բանաստեղծության «Այս ամենի մեջ ապրում է ռզին մի Նոր գաղտնիքի» տողում Հենրիկ Էդոյանը արտահայտում է աշխարհի միստիկ Նորացման սպասումը:

«Մեռյալների գրքի» ավանդները որոշակի կիրառություն են ստացել Թ. Էլիոթի, Ռ. Ռիլկեի, Սեն-Ժոն Պերսի և այլոց ստեղծագործություններում: Հ. Էդոյանը նրանց գեղագիտական որոնումների շարունակողն է: